ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2013 թվականի N 110 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ,,ԻՋԵՎԱՆԻ ԲԿ'' ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով, ի կատարումն ՀՀ Տավուշի մարզպետի՝ 2011 թվականի դեկտեմբերի 19-ի< Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների տնօրենների ընտրության/նշանակման/ մրցույթի կարգը հաստատելու և ՀՀ Տավուշի մարզպետի 2007թվականի հունվարի 29-ի թիվ 6-Ն և ՀՀ Տավուշի մարզպետի 2007-ի թիվ 7-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին՝ թիվ 203 -Ն որոշման հավելվածով հաստատված ընթացակարգի 6-րդ կետով՝

Որոշում եմ.

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.
Ս.Դավթյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար,
Ֆ.Ափինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ,
Կ.Դովլաթբեկյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
Ռ.Ներսեսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,
Հ.Ավալյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ,
Ա.Գևորգյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ,
Վ.Խառատյան - Հանձնաժողովի քարտողար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ :
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

26 սեպտեմբերի 2013թ.
ք. Իջևան